

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Հիսուսի գերբնական հրաշալի ծնունդով մեկ բոլորիս, մեր օրերի աշխարհին համայն, նույն աստվածային պատգամն է տրվում՝ որ փշրվեն քարե սրտերը, և մարդիկ ու ազգություններ «նոր սիրտ ու ոգի» ստացած, իրենց կյանքի ճանապարհին՝ արդարությամբ և խաղաղությամբ գործեն, որ արդարությամբ՝ խաղաղություն լինի և խաղաղությամբ՝ արդարություն» (Վեհափառ Հայրապետի 6 հունվարի 1982 թ. Ս. Ծննդյան քարոզից):

Հիսուսի «գերբնական հրաշալի ծնունդը» նվիրական դարձավ քրիստոնեական բոլոր Եկեղեցիների համար: Դեռևս Դ դարի սկզբներից Հայ Եկեղեցին սրբությամբ որդեգրեց Փրկչի հրաշափառ Ծննդի տոնակատարությունը, և այն ավանդաբար փոխանցվեց սերնդե սերունդ մինչև մեր օրերը:

Այս տարի ևս Ս. Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում նշվում են մեծ շուքով ու ոգևորությամբ:

Հունվարի 5-ին, հինգշաբթի.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո սկսվում է Ճրագալույցի ս. պատարագը: Ավագ խորանի վրա պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ» (Հովհ. Գ 16) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականները հավատացյալ ժողովրդին ավետում են Քրիստոսի Ս. Ծնունդը:

Հունվարի 6-ին, ուրբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում առավոտյան տոնական ժամերգությունից հետո, ժամը 11-ին, սկսվում է հանդիսավոր ս. պատարագը:

Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Նորին Սրբությունը Հայրապետական Իր պատգամն է տալիս համայն հավատացյալ հայ ժողովրդին (Վեհափառ Հայրապետի պատգամը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Նույն օրը, երեկոյան, Հայոց Հայրապետի վերոհիշյալ պատգամը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը կատարում է Զրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Քրիստոսի մկրտության:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը:

Ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում ողջույնի և շնորհավորական խոսք է ասում Վեհափառ Հայրապետը: